Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 2-ի N 855 - Ն որոշման

2011 Թ Վ Ա Կ Ա Ն Ի Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ»

Ի. ՆԱԽԱԲԱՆ

1. Պետական աջակցություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացման 2011 թվականի ծրագիրը, հանդիսանալով Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) գործունեության իրականացման պետական աջակցության 2010 թվականի ծրագրի շարունակականության ապահովումը, մշակվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով որդեգրված քաղաքականությունն ու սահմանված ռազմավարական գերակայությունները, և ուղղված է Հայաստանում գերակա ծրագրերի մշակմանն ու մրցունակության բարձրացմանը:

2. Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից գերակա ընտրված զբոսաշրջության, առողջապահության և կրթության ոլորտների զարգացման տեսանկյունից կարևորվում են ներդրումային ակտիվության խթանումը, իրազեկվածության բարձրացումը, ենթակառուցվածքների գնահատումը, դրանց զարգացմանը խթանող միջոցառումների իրականացումը:

3. Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործունեության կազմակերպման և հետագա զարգացման արդյունավետության համար առաջարկվում է՝

1) ակտիվացնել պետական կառավարման մարմինների աջակցությունը հիմնադրամի գործունեության ծավալման և հետագա զարգացման գործընթացում՝ միջազգային կապերի ընդլայնման նպատակով, պետական մարմինների կողմից իրականացվող/բարեբարների կամ մասնավոր հատվածը ներկայացնող միջազգային գործարարների հետ հանդիպումների, համաժողովների և այլ միջոցառումների ժամանակ Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի ներկայացուցչին ներգրավելու և հիմնադրամի կողմից իրականացվող գործունեությունը ներկայացնելու միջոցով.

2) բարելավել Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործունեության իրականացման համար տրամադրվող աշխատանքային պայմանները:

4. Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործունեության իրականացման համար «Աջակցություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանը» 2008, 2009, 2010 թվականների ծրագրով արդեն իսկ իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

1) ծրագրի ընդհանուր կառավարման համար ձևավորվել է թիմ, որի կազմում ներգրավվել են մասնագետներ ինչպես պետական հատվածից և այլ կազմակերպություններից, այնպես էլ՝ վճարովի խորհրդատուներ.

2) առողջապահության ծրագրի շրջանակներում 2010 թվականի միջուկային բժշկության ներդրման և ուռուցքաբանության գերազանցության կենտրոնի ստեղծման ուղղությամբ իրականացվեցին հիմնարար աշխատանքներ՝

ա. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2010 թվականի հոկտեմբերի 7-ին ընդունեց «Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն ստեղ-

ծելու ծրագրին հավանություն տալու, «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 19-ի N 310-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1424-Ն որոշումը,

բ. 2010 թվականի նոյեմբերի 8-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունում ստորագրվեցին բելգիական ՔեյԲիՍի բանկի և ԱյԲիԷյ ընկերության հետ համապատասխանաբար ցիկլոտրոն սարքի գնման վարկավորման ու այդ սարքի արտադրության պայմանագրերը,

գ. 2010 թվականի դեկտեմբերի 29-ին գրանցվեց «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը,

դ. նշվածի արդյունքում ձևավորվեցին միջուկային բժշկության և ուռուցքաբանության գերազանցության կենտրոնի կարևորագույն բաղադրիչներից հանդիսացող ռադիոիզոտոպների արտադրությունը կազմակերպելու իրավական ու ֆունկցիոնալ հիմքերը,

ե. ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնին հողատարածք հատկացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 7-ի N 1424-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը,

զ. մշակվել է «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը նախագծանախահաշվային աշխատանքների գնման նպատակով վարկ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը.

3) զբոսաշրջության ծրագրի շրջանակներում՝

ա. Հայաստանի զբոսաշրջության զարգացման և խթանման ռազմավարության շրջանակներում Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը մշակել է զբոսաշրջության զարգացման միջանցքների հայեցակարգը, որը ներառում է Կենտրոնական, Սևանա լճի, Հյուսիսային և Հարավային առանցքները: Ներկայումս մշակվում են զբոսաշրջային արդյունքի զարգացման փաթեթներ և ներդրումային նախագծերի երկու առանցքները՝ Սևանա լճի տարածքի և Հարավային միջանցքի համար: Վերջինս ընդգրկում է Նորավանքը, Ջերմուկը և Տաթևի վանական համալիրը: Հայաստանի հարավային միջանցքի զբոսաշրջության զարգացման գլխավոր հատակագիծ ներկայացնելու նպատակով հիմնադրամը պայմանագիր է կնքել ամերիկյան հեղինակավոր «ԱԵԿՈՄ» ընկերության հետ: Հատակագիծը կներառի Վայոց ձորի և Սյունիքի մարզերը՝ ներկայացնելով մանրամասն վերլուծություններ և հետազոտություններ, յուրաքանչյուր քաղաքի և գյուղի համար՝ հատուկ մշակված ծրագիր և զարգացման ճիշտ ուղղություններ՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկություններն ու հնարավոր աճը: Հարավային առանցքի զբոսաշրջավայրերը զարգացնելու և խթանելու նպատակով հնարավոր կլինի զբոսաշրջիկների չորս ժամ տևող ուղևորությունը դեպի Հայաստանի հարավ վերածել չորսօրյա հետաքրքիր և բազմազան ճանապարհորդության,

բ. Մրցունակության հիմնադրամը նախաձեռնել է Հարավային առանցքի առաջնային ծրագրի իրագործում, որը կազմված է մի քանի բաղադրիչներից. համալիրի պահպանում, վանական կյանքի և գիտական ավանդույթների վերականգնում, համայնքային զբոսաշրջության զարգացումը հարակից վեց գյուղերում՝ ներառյալ իջևանատները, ինտերակտիվ թանգարաններ և զբոսաշրջության ենթակառուցվածքներ, աշխարհում ամենաերկար ճոպանուղին: Ծրագիրը ներառում է Տաթև, Հալիձոր, Տանձատափ, Սվարանց, Խոտ և Շինուհայր գյուղերը: Նախատեսվում է վերականգնել

Տաթևի վանական համալիրը և շրջակա տարածքը, ինչպես նաև կառուցել հյուրանոց, զարգացնել ենթակառուցվածքները և մշակել զբոսաշրջային արդյունքի տեսակներ, ինչպիսիք են «խոհարարական զբոսաշրջության» և աշխարհի ամենաերկար հետադարձելի ճոպանուղին,

գ. 2010 թվականի հոկտեմբերի 16-ին Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը «ՏԱԹևեր» ճոպանուղու շահագործմամբ ազդարարեց «Տաթևի վերածնունդ» ծրագրի մեկնարկը: Ճոպանուղին միացնում է Հալիձոր և Տաթև գյուղերը՝ ներկայանալով որպես տարածաշրջանի համար նոր զբոսաշրջային արդյունք: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ նաև «Այ-Բայ» առցանց նվիրատվությունների ծրագրի համար հանրային քարոզարշավի կազմակերպում, 18 տեղական լրատվամիջոցների և 28 միջազգային լրագրողների համար ճանաչողական այցի կազմակերպում դեպի Տաթև, մամլո ասուլիսների կազմակերպում, տեղեկատվական փաթեթների մշակում, Գինեսի համաշխարհային ռեկորդներում «ՏԱԹևեր» ճոպանուղու գրանցում,

դ. վերականգնվել և շահագործման է հանձնվել Տաթևի վանական համալիրի ձեթի միջնադարյան արտադրամասը՝ Ձիթ-հանը, որն այցելուներին և զբոսաշրջիկներին ներկայացնում է հայկական միջնադարյան ձիթարտադրության տեխնոլոգիան,

ե. Տաթևի բացման ծրագրի շրջանակներում կատարվել է «Հայկական խոհանոցի վերածնունդ» ծրագրի մեկնարկը, որի նպատակն է վերականգնել և պահպանել հայկական խոհանոցային մշակույթը՝ ներգրավելով գյուղականը: Ծրագիրը հնարավորություն է տալիս զարգացնելու խոհանոցային նոր մշակույթ, որի շրջանակներում կարելի է առաջարկել յուրահատուկ զբոսաշրջային արդյունք մարզային, հանրապետական և միջազգային մակարդակներով,

զ. մշակվել է Ջերմուկում զբոսաշրջային վայրի կառավարման գրասենյակի հիմնման նախագիծը, ինչպես նաև մշակվել է ծրագրի ֆինանսավորումն ապահովելու համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը և որոշման հիմնավորումը,

է. հիմնադրամը 2010 թվականի ընթացքում կազմել է լուծարային գործընթացի միջոցառումների ծրագիր, որը հաջորդաբար ներառում է լուծարային գործընթացի գործողությունները, ժամանակացույցը և ընթացիկ վիճակը, այդ թվում՝ «Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերության լուծարման մասին հայտարարության պատրաստում և տպագրում, «Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերության նախկին աշխատողների հետ աշխատանքային պայմանագրերի կնքում, ընկերության ֆինանսատնտեսական իրավիճակի ուսումնասիրություն իրականացնելու նպատակով չորս անկախ փորձագիտական կազմակերպությունների առաջարկների ուսումնասիրում, «Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերության լուծարային միջանկյալ հաշվեկշռի կազմում և գույքագրում, կոմիսիոներների գույքի վերադարձի կազմակերպում, լուծարային գործընթացին անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստում,

ը. մշակվել է «Այցելուների տեղեկատվական կենտրոն» բիզնես-նախագծի երկու տարբերակ, համաձայն որի նոր կենտրոնը տեղակայված է լինելու կամ Հայաստանի պատմության թանգարանի առջևի սյունաշարի տարածքում կամ Հանրապետության հրապարակի շատրվանների մոտակայքում գտնվող կանաչապատ տարածքում: Նոր տեղեկատվական կենտրոնի նախագիծը կներկայացվի Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը 2011 թվականի առաջին եռամսյա-

կում, որն էլ հաստատման դեպքում շահագործման կհանձնվի 2012 թվականի առաջին եռամսյակում.

4) 2010 թվականի ընթացքում Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը մշակեց Կրթության ծրագրի նախնական հայեցակարգը: Ծրագիրը կկենտրոնանա բարձրագույն կրթության ոլորտում համալսարանական հետազոտությունների գործառույթի հզորացման, ինչպես նաև համալսարանների ու գործարար համայնքի միջև կապի ամրապնդման վրա՝ հետազոտական գործունեության առևտրականացման միջոցով: Ծրագրի շրջանակներում կկառուցվի համագործակցություն մեկ կամ ավելի առաջատար համալսարանների ընտրված տեխնիկական ոլորտների ֆակուլտետների հետ՝ իրականացնելով մասնավոր-պետական գործընկերության վրա հիմնված ներդրումային ծրագիր, որի շնորհիվ համալսարանների համար կապահովվեն համատեղ ռեսուրսներ և դրամաշնորհներ, ինչպես նաև կստեղծվեն կապեր միջազգային գերազանցության կենտրոնների հետ.

5) սկսած 2009 թվականից՝ Հայաստանում մեկնարկել է ազգային լայնաշերտ հիմնացանցի ներդրման ուղղությամբ Տեխնոլոգիաների մրցունակության բարձրացման ծրագրի նախապատրաստման համար հայաստանյան հեռահաղորդակցության ոլորտի բազմակողմանի վերլուծության խորհրդատվական առաջադրանքը՝ համապատասխան իրականացնող ընկերության ընտրությունից հետո: Խորհրդատվական առաջադրանքի ընդհանուր արժեքն է 190.000 ԱՄՆ-ի դոլար: Ծրագրի իրականացման հիմնական կողմերից մեկն է հանդիսանալու մասնավոր հատվածի ներդրումների խթանման համար մեխանիզմի մշակումը՝ հանրային և մասնավոր հատվածների միջև գործընկերության կենսունակ մոդելի ստեղծման նպատակով: Այն կապահովի լայնաշերտ հեռահաղորդակցության ծառայությունների ծածկույթ և հասանելիություն Հայաստանի

ամբողջ տարածքում՝ համապատասխան պահանջարկի դեպքում նպատակ ունենալով յուրաքանչյուր վերջնական սպառողին տրամադրել 100 Մբիտ/վ մուտքի արագություն.

6) ֆոնդահայթայթման և իրազեկվածության բարձրացման շրջանակներում աշխատանքներ են իրականացվել հիմնադրամի և դրա գործունեության ոլորտների մասին տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ՝

ա. 2009-2011 թվականների ընթացքում թողարկվել է երկու ինտերնետային կայք՝ www.cf.am և www.tatev.am, որոնք նպատակ ունեն տեղեկատվություն տարածելու հիմնադրամի հիմնական գործունեության և ոլորտների մասին, ինչպես նաև աջակցող գործունեություն իրականացնել ֆոնդահայթայթման և հիմնադրամի իմիջի ձևավորման առումով: Գործունեության ընթացքում Մրցունակության հիմնադրամը չորս անգամ իրականացրել է ճանաչողական այցեր տեղական լրատվամիջոցների համար դեպի Հայաստանի հարավ, ինչպես նաև մի շարք մամլո ասուլիսներ, միջոցառումներ՝ լրատվամիջոցների համար, պատրաստվել են տեղեկատվական փաթեթներ, իրականացվել են լրատվամիջոցների կոնտենտ վերլուծություն և այլն,

բ. 2010 թվականին մշակվեցին հատուկ նյութեր, և ստեղծվեցին հատուկ փաթեթներ պոտենցիալ ներդրողներին և բարերարներին «Տաթևի վերածնունդ» ծրագիրը ներկայացնելու և նրա իրականացման համար գումարներ հայթայթելու նպատակով: Արդյունքում՝ 2010 թվականի հոկտեմբերի 16-ին Տաթևի ճոպանուղու բացման արարողության շրջանակներում հավաքվեց 112.000 ԱՄՆ-ի դոլար: Ստեղծվեց պոտենցիալ ներդրողների և բարերարների մի խումբ, որը հնարավորություն է տալիս կոնկրետ մարդկանց դիմելու կոնկրետ ծրագրերի և դրանց բաղադրիչներին աջակցելու համար: «Տաթևի վերածնունդ» ծրագրի շրջանակներում ձևավորվեց ընդգրկուն միջոցների հայթայթման ծրագիր առաջիկա երեք տարիների համար,

գ. հիմնադրամի գործունեության ոլորտների շրջանակներում մշակվեցին կոնկրետ ծրագրային առաջարկներ, որոնք ներկայացնելու արդյունքում «Ձինիշն» հիմնադրամից ստացվեց 100.000 ԱՄՆ-ի դոլար տրամադրելու նախնական պայմանավորվածություն,

դ. Մրցունակության հիմնադրամի անձնակազմի կողմից ստեղծվեցին զբոսաշրջության, առողջապահության և ինովացիայի գծով աջակից խորհուրդների թեկնածուների ցուցակներ, որոնք ներառում են համապատասխան ոլորտների 10-15 ակնավոր ներկայացուցիչների,

ե. 2010 թվականին մրցունակության հիմնադրամը ներկայացրեց իր գործունեությունը և հետագա ծրագրերը ԱՄՆ-ի մայրաքաղաք Վաշինգտոնի Ռից-Քարլտոն հյուրանոցում հավաքված հայկական համայնքի և այլ ազգերի ներկայացուցիչներից բաղկացած լսարանին: Ելույթներին հաջորդեցին հարցադրումների նստաշրջան և ընդունելություն, որոնք հնարավորություն ընձեռեցին քննարկելու Հայաստանի տնտեսության զարգացման հետ կապված բազմաթիվ հարցեր: 2010 թվականի հոկտեմբերի 7-ին տեղի ունեցավ նաև Մրցունակության հիմնադրամի գործադիր տնօրենի ելույթը Համաշխարհային բանկում՝ նվիրված սփյուռքի հետ համագործակցելու ռազմավարությանը և Մրցունակության հիմնադրամի կողմից ընտրված մոտեցումներին: Իրականացված միջոցառման արդյունքում Համաշխարհային բանկի նեկայացուցիչների կողմից բարձր գնահատվեցին Մրցունակության հիմնադրամի աշխատանքները: Նախատեսվում է կազմակերպել մի շարք նման միջոցառումներ Եվրոպայում և ԱՄՆ-ում: Սկսվել են աշխատանքներ Բրյուսելում, Մոսկվայում և ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում՝ ելույթների կազմակերպման ուղղությամբ,

զ. մշակվել է Ուռուցքաբանության գերազանցության տարածաշրջանային կենտրոնի՝ ներդրողների հետ հարաբերությունների կառավարման ծրագիր: Ծրագիրը

հիմնված է ուսումնասիրությունների արդյունքում ընտրված ռազմավարության վրա և նկարագրում է ներդրողներ փնտրելու գործընթացը՝ չափորոշիչների մշակումից մինչև պայմանագրերի ստորագրումը: Փաստաթղթում ներկայացված են նաև ծրագրի բյուջեն, ժամկետները և հետագա քայլերը,

է. մշակվել է Մրցունակության հիմնադրամի հասարակայնության հետ կապերի համար նախատեսվող բրոշյուրի առաջին տարբերակը: Այն ներկայացնում է Հայաստանի զարգացման՝ Մրցունակության հիմնադրամի տեսլականը, ինչպես նաև կազմակերպության ընթացիկ և ապագա ծրագրերը: Աշխատանքներում ներգրավված է արտասահմանյան փորձագետ,

ը. իրականացվել է «ՄքՔինզի ընդ Քամփնի» խորհրդատվական ընկերության համաշխարհային տնօրենի այցը Հայաստան: Այցի շրջանակներում կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ նաև հանդիպում Հայաստանի առաջատար գործարարների և լրատվական միջոցների ներկայացուցիչների հետ:

II. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

5. Ծրագրի մշակման և իրականացման հիմքը՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ հիմնադրելու և գործադիր տնօրեն նշանակելու և Հայաստանի Հանրապետության առեվտրի և տնտեսական զարգացման նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 204-Ա որոշում.

2) «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի «Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրա-

կան ընկերությունը լուծարելու և Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամին լիազորություններ վերապահելու մասին» N 1297-Ն որոշում.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 16-ի «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգից բխող 2008-2012 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1322-Ն որոշում.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 19-ի «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում «Ցիկլոն 18/18» իզոտոպների արտադրության համալիրի տեղադրման և Հայաստանի Հանրապետությունում միջուկային բժշկության կենտրոնի ստեղծմանն աջակցելու ծրագրին հավանություն տալու մասին» N 310-Ն որոշում.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 7-ի «Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն ստեղծելու ծրագրին հավանություն տալու, «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 19-ի N 310-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1424-Ն որոշում:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

6. Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանն ուղղված պետական աջակցության ծրագրի հիմնական նպատակն է խթանել զարգացման համար թիրախային ընտրված ոլորտների զարգացումը և կայունացումը, խթանել ներդրումների հոսքը, իրագործել տվյալ ոլորտների զարգացման համար անհրաժեշտ միջոցառումները: Արդյունքում՝ ակնկալվում է

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացմանը նպաստելը և վերջինիս բարեփոխումներին աջակցելը, ինչպես նաև որոշ ոլորտների մրցունակության բարձրացմանը խթանելը և Հայաստանի տնտեսության տարբեր ճյուղերը երկարաժամկետ մրցունակության առավելագույն աստիճանի հասցնելը:

7. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում են՝

1) պետական-մասնավոր համագործակցության խթանման և նախատեսվող միջոցառումների իրականացման միջոցով խթանել Հայաստանի տնտեսության զարգացումը.

2) գերակա ծրագրերի իրականացման միջոցով զարգացնել գերակա ընտրված ոլորտները և բարձրացնել գլոբալ մրցունակության աստիճանը.

3) բարձրացնել տեղական և միջազգային շուկայում Հայաստանում մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ իրազեկվածության աստիճանը:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

8. Ծրագիրն իրականացվում է պետական և մասնավոր հատվածների սերտ համագործակցությամբ՝ որպես պետական աջակցություն հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանը:

V. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

9. Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործունեության իրականացման համար նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

1) հիմնադրամի գերակա ընտրված ոլորտներում ծրագրերի մշակում և իրագործում.

2) ներդրումների ներգրավման նպատակով նշված ծրագրերի իրականացման գործընթացում կառավարման գրասենյակի կողմից համապատասխան աշխատանքների իրականացում օտարերկրյա ներդրողների շրջանում.

3) հիմնադրամի գործունեության իրականացման համար սույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է ֆինանսավորում ծրագրի հետևյալ բաղադրիչին՝ հիմնադրամի գործունեության կառավարում: Այս միջոցառման շրջանակներում նախատեսվում է զարգացնել հիմնադրամի ձևավորված կառավարման գրասենյակը (գրասենյակի վարձակալություն, աշխատավարձեր և պահպանման ծախսեր):

VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

10. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով, որպես ծրագրի իրականացմանը պետական աջակցության կողմնորոշիչ չափաքանակ, սահմանվել է 264.000.00 հազ. դրամը:

11. «Պետական աջակցություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանը» 2011 թվականի ծրագիրը կֆինանսավորվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ